



## SOCIAL IMPACT AWARD 2022 – Դիմելու կարգը

Ընտրության արդար եւ թափանցիկ գործընթացը կարևորագույն նշանակություն ունի Social Impact Award-ի աշխատանքային թիմի համար: Այս փաստաթղթում մենք մանրամասն կներկայացնենք այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է Social Impact Award-ին մասնակցելու համար:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաքելութեան	1
SIA-ի ընդունումը ժամանակագրությամբ	2
Ուժեղ Կարող եւ Դիմել	3
Դիմելու Գործընթաց	3
Գրառարարական Ձևեր	3
Սոցիալական ազդեցության ներուժը	4
Նորարարության աստիճանը	4
Իրագործելիությունը և իրականացման հնարավորությունը	4
COVID-19-ի շեշտակիքներ	5
Եզրույթի մասին Մասնակցների ընտրություն	5
Մասնակցության իրավունքի ստուգում	5
Մեթոդներ	5
Հարցազրույցներ	6
Ժյուրիի գնահատումը եզրափակիչ անցած մասնակիցների ընտրության փուլում	6
Հարցումների ընտրություն	6
Ժյուրիի գնահատումը հարցումների ընտրության փուլում	6
Համայնքի փոփոխություն	7
Մրցանակներ եւ շնորհակալություններ	7
Մրցանակներ	7
Շնորհակալությունների աջակցություն	7
Հետազոտողական ամփոփում	8

Ջետազա հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել՝ գրելով այս էլեկտրոնային փոստի հասցեին՝ [nairi.melkomian@socialimpactaward.net](mailto:nairi.melkomian@socialimpactaward.net):



## Առաքելություն

2009 թվականին հիմնադրված Social Impact Award-ն իրականացնում է կրթական և ինկուբացիոն ծրագրեր Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի 19 երկրներում՝ աջակցելով նախնական փուլում գտնվող ձեռնարկատերերին՝ զարգացնելու և իրականացնելու նորարարական բիզնես լուծումներ, որոնք բերում են սոցիալական կարևոր խնդիրների լուծման: Մենք դա անում ենք՝ իրականացնելով տարբեր միջոցառումներ և դասընթացներ՝ բարձրացնելու իրազեկվածությունը սոցիալական ձեռներեցության մասին, սովորեցնելու անհրաժեշտ հմտություններ՝ դեռ լիովին չձևավորված գաղափարը հեռանկարային ձեռնարկություն դարձնելու համար, տալու հասանելիություն դեպի մասնագիտական ցանցեր և լավագույն թիմերին խթանելու Social Impact Award-ի միջոցով:

Social Impact Award-ի հասցեատերերը երիտասարդ նորարարներն են, ովքեր փորձում են լուծել առկա սոցիալական կամ էկոլոգիական խնդիրները նորարարական նախագծերի, նախաձեռնությունների կամ կազմակերպությունների ստեղծման միջոցով: Կարող են լինել տարբեր ուղղվածության ձեռնարկություններ, օրինակ՝ աղքատության կրճատում, առողջապահություն, կրթություն, շրջակա միջավայր, էներգետիկա, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, մարդու իրավունքներ, հավասար հնարավորություններ, խնամք և այլն: Նախորդ տարիների լավագույն ձեռնարկություններին կարող եք ծանոթանալ մեր [Ոգեշնչման գրքում](#):

## SIA-ի ընդհանուր ժամանակացույց

**Հայտնաբերման փուլը** սկսվում է **մեկնարկային միջոցառմամբ** և ավարտվում **դիմելու վերջնաժամկետով՝ 2022թ. հուլիսի 10**: Այդ ընթացքում մենք իրականացնում ենք տարատեսակ **բաց միջոցառումներ և դասընթացներ**, որպեսզի օգնենք ձեզ հստակեցնելու նորարարական գաղափարները, զարգացնելու դրանց հավանական կոնցեպտները և դրանց շուրջ կառուցելու բիզնես մոդելներ: Ցանկալի է, որ հավանական դիմորդները մասնակցեն այդ միջոցառումներին, սակայն դա պարտադիր պայման չէ:

Դիմորդները կարող են ներկայացնել իրենց գաղափարները հայտնաբերման ողջ փուլի ընթացքում: Եթե դիմորդները ցանկանում են ստանալ կարծիք կամ արձագանք, նրանք կարող են իրենց գաղափարն ուղարկել առցանց հարթակի միջոցով մինչև 2022թ. հուլիսի 8-ը: SIA-ի թիմը կհայտնի իր կարծիքը ձեր գաղափարի վերաբերյալ՝ այդպիսով հնարավորություն տալով ձեզ ստացված կարծիքների և առաջարկների հիման վրա կատարելագործելու այն մինչև վերջնաժամկետի ավարտը:

Վերջնաժամկետի ավարտից հետո ամենախոստումնալից 10 գաղափարները կընտրվեն Ժյուրիի կողմից (մանրամասները ներկայացված են [«Եզրափակիչ անցած մասնակիցների ընտրությունը»](#) բաժնում) և կհայտարարվեն 2022 թվականի հուլիսի 29-ին: Եզրափակիչ անցած մասնակիցները կտեղափոխվեն **ինկուբացիոն փուլ**, որի ընթացքում նրանք կաշխատեն խնդրի լուծման տեղայնացման, բիզնես մոդելի և գարծառնական շրջանակի վրա՝ մեր մենթորների և փորձագետների անմիջական աջակցությամբ:



Ինկուբացիայի ավարտից հետո ծրագիրը կթևակոխի **մրցանակային փուլ**, որտեղ ժյուրին ինկուբացիոն փուլի եզրափակիչ անցած մասնակիցներից կընտրի լավագույն ձեռնարկություններին (մանրամասները ներկայացված են [«Ջաղթողների ընտրությունը»](#) բաժնում) և 2022 թվականի հոկտեմբերի 1-ին կայանալիք **մրցանակաբաշխության** ժամանակ նրանց կտրամադրի **ժյուրիի մրցանակները**: Ինկուբացիոն փուլի ժամանակ մենք մեր կայքում նաև կներկայացնենք եզրափակիչ անցած բոլոր մասնակիցների մասին տեսանյութեր: SIA համայնքը կարող է քվեարկել իր նախընտրած ձեռնարկության օգտին սեպտեմբերի 13-ից (10:00) մինչև սեպտեմբերի 30-ը (23:59): Առավելագույն ձայներ ստացած ձեռնարկությունը կարժանանա **Ջամայնքի մրցանակին**<sup>1</sup>:

Social Impact Award բոլոր երկրների մրցանակակիրները միասին կմասնակցեն **SIA գազաթնաժողովին**, որն այս տարի տեղի կունենա նոյեմբերի 15-19-ը Վիեննայում (Ավստրիա): Այնտեղ նրանք կշփվեն միջազգային SIA համայնքի հետ և ձեռք կբերեն նոր հմտություններ:

## Ովքե՞ր կարող են դիմել

Social Impact Award 2022-ի համար դիմորդները պետք է համապատասխանեն հետևյալ կետերին.

- Ջիմնական թիմի բոլոր անդամները պետք է ծնված լինեն 1992թ. հունվարի 1-ից մինչև 2007թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում,
- Դիմորդը(ները) նախորդ տարիներին նույն գաղափարով չպետք է մասնակցած լինեն SIA-ի ինկուբացիային կամ շահած լինեն SIA մրցանակ<sup>2</sup>,
- Գաղափարը օրինականորեն չի հիմնադրվել մինչև 2021 թվականի հունվարի 1-ը,
- Գաղափարը չի ստացել 3000 € գերազանցող ձեւավորված դրամական աջակցություն արտաքին ռեսուրսներից նախքան ներկայացման ամսաթիվը (օրինակ՝ «իրեշտակի» ներդրումներ, դրամաշնորհներ, մրցանակային գումար եւ այլն),
- Թիմի անդամներից ամնվազն մեկը բնակվում է այն երկրում, որտեղ նա դիմում է Social Impact Award-ին,
- Կոդիտարկվեն միայն այն թեկնածուները, որոնք մեր կայքում հայտադիմումն ամբողջությամբ կլրացնեն մինչև 2022 թվականի հուլիսի 10-ը (23:59):

Խնդրում ենք նկատի ունենալ, որ նախորդ տարիներին դիմած գաղափարները, բացառությամբ եզրափակիչ անցած և հաղթող ձեռնարկությունների, կարող են նորից դիմել 2022 թվականին, եթե համապատասխանում են դիմելու կարգին: Անհատները/թիմերը կարող են դիմել ևոր գաղափարներով, եթե նույնիսկ նախորդ տարիներին նրանք անցել են եզրափակիչ փուլ կամ ճանաչվել են հաղթող:

<sup>1</sup> Ջնարավոր չէ ստանալ երկու Social Impact Award: Եթե ձեռնարկությունը շահի ինչպես համայնքի, այնպես էլ ժյուրիի մրցանակները, ապա կստանա այն, որն ավելի բարձր է:

<sup>2</sup> Այն չի ներառում նախորդ տարիներին հայտնաբերման փուլի ընթացքում SIA դասընթացներին կամ միջոցառումներին մասնակցությունը: Եթե Դուք, օրինակ, մասնակցել եք նախորդ տարվա մեկնարկային միջոցառման, ապա կարող եք նորից դիմել:



## Դիմելու գործընթացը

Social Impact Award-ի բոլոր դիմորդները պետք է հայտադիմումը լրացնեն [apply.socialimpactaward.net/Armenia/](https://apply.socialimpactaward.net/Armenia/) առցանց հարթակում: Հայտադիմումները կդիտարկվեն, եթե լրացված լինեն մինչև 2022 թվականի հուլիսի 10-ը (23:59):

Դիմորդները պետք է գրանցվեն կայքում, որպեսզի նախագիծ ստեղծելու հնարավորություն ունենան: Դիմորդները պետք է տրամադրեն տեղեկատվություն իրենց թիմի անդամների, հիմնական գաղափարի, սոցիալական ազդեցության ներուժի և իրագործելիության ու իրականացման հնարավորությունների մասին: Դիմորդները կարող են պահպանել հայտադիմումն ու վերջնական տեսքի բերել ավելի ուշ (մինչև դիմելու վերջնաժամկետը):

## Գնահատման չափանիշներ

Եզրափակիչ անցած մասնակիցների և հաղթողների գնահատումը հիմնված է երեք չափանիշների վրա՝ **սոցիալական ազդեցության ներուժ, նորարարության աստիճան, իրագործելիություն և իրականացման հնարավորություններ**: Երեք չափանիշներից յուրաքանչյուրը գնահատվում են **հավասարապես**: Հաջորդիվ ներկայացված նկարագրությունները և ուղեցող հարցերը պարզաբանման և ժյուրիին ու սքրինինգ թիմին օգնելու համար են:

## Սոցիալական ազդեցության ներուժը

Մենք փնտրում ենք **բարձր սոցիալական արդիականությամբ եւ ուժեղ ազդեցությամբ** գաղափարներ: Որպես սոցիալական ազդեցության ներուժ կարող է հասկացվել ձեռնարկության ենթադրվող գործողությունների հավանական մաքուր ազդեցությունն իր նպատակային շահառուների խմբի կամ շրջակա միջավայրի վրա:

- Ի՞նչ սոցիալական ազդեցություն է ձեռնարկությունը գեներացնում իր շահառուների և հասարակության համար:
- Որքանով են արդիական ձեռնարկության գաղափարները թիրախային շահառուների խմբի համար:
- Դիմորդն ունի՞ հստակ պատկերացում, թե ինչ սոցիալական ազդեցության է ցանկանում հասնել և ում համար:
- Կարո՞ղ է կոնցեպտը դառնալ մասշտաբային, այսինքն՝ այն ունի՞ աճելու ներուժ՝ ընդգրկելով թիրախային խմբի մեծ մասը, և/կամ կարո՞ղ է տեղափոխվել այլ շուկաներ կամ նպատակային խմբեր՝ առանց արդյունավետության կամ կատարման մակարդակի կորուստի:



## Նորարարության աստիճանը

Մենք փնտրում ենք մեր ժամանակների խնդիրներին մոտեցող և դրանք լուծող նոր գաղափարներ: Մենք ցանկանում ենք **Նոր, խոստումնալից մոտեցումներ**, որոնք կարող են բարելավել մեր ընդհանուր ապագան երկրի վրա: Նորարարությունը կարող է տարբեր լինել՝ կախված կոնտեքստից և ժամանակից:

- Նոր միջոցներ ու մեթոդներ օգտագործվում են ձեռնարկության նպատակին հասնելու համար:
- Գաղափարը կենտրոնացած է նոր, թե՛ անտեսված գաղափարի վրա:
- Առկա միջոցները հարմար են հասցեագրված խնդիրների լուծման համար և արդյո՞ք գերազանցում են ընթացիկ լուծումներին:

## Իրագործելիությունը և իրականացման հնարավորությունները

Սոցիալական ազդեցության ներուժով և նորարարական գաղափարը հրաշալի է: Բայց ձեռնարկությունը միայն այն դեպքում կարող է բացել իր ներուժը, եթե **հաջողվի այդ գաղափարն իրականացնել**:

- Ձեռնարկության իրականացումն իրատեսակա՞ն է:
- Կա՞ն հստակ ծրագրված նպատակներ ու գործողություններ և հասկանալի՞ են դրանք:
- Դիմորդը/թիմը մտածե՞լ է երկարաժամկետ նպատակների և ընդլայնման մասին:
- Դիմորդը/թիմը մտածե՞լ է այլ անձանց ներգրավման, մարքեթինգի, PR-ի և այլ կազմակերպությունների հետ համագործակցության մասին:
- Դիմորդը/թիմն ունի՞ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ձեռնարկությունն իրականություն դարձնելու համար կամ ունի՞ այդ ամենին հասնելու ծրագիր:
- Դիմորդը/թիմն ունի՞ անհրաժեշտ ռեսուրսներ (գիտելիքներ, փորձ, հմտություններ) ձեռնարկությունն իրականացնելու համար կամ ունի՞ այդ ամենին հասնելու ծրագիր:
- Դիմորդը/թիմն ունի՞ անհրաժեշտ մոտիվացիա և նվիրում նպաստելու ձեռնարկության իրականացմանը:

## Քովիդ-19-ի հետևանքները

Բացի այն, որ SIA-ն բազմաթիվ կետերով հարմարեցրել է իր ծրագիրն այս նոր իրականությանը (օրինակ՝ ծրագրի մեծ մասը տեղափոխել է առցանց), մենք ուզում ենք ընդգծել, թե ինչպես են մեր սքրինիգ թիմը և ժյուրին գնահատելու դիմորդներին՝ ելնելով Քովիդ-19-ից:

- **Շեշտադրված են այդպեք այն գաղափարները, որոնք լուծում են Քովիդ-19-ի առաջացրած խնդիրները:** Ոչ, SIA-ն շարունակում է բաց լինել տարատեսակ գաղափարների համար՝ ուղղված տարբեր խնդիրների: Այսօր և ապագայում մենք կարիք ունենք սոցիալական նորարարությունների բոլոր ոլորտներում:



- **Ընդունվում են արդյոք այն գաղափարները, որոնց հետ աշխատելը կարող է դժվարություններ առաջացնել Քովիդ-19-ի ժամանակ:** Այո, իհարկե: Մենք վստահ ենք, որ SIA-ն կարող է շատ կարևոր դեր ունենալ նմանատիպ գաղափարների համար ինկուբացիայի ժամանակ և դրանից հետո: Յետևաբար մենք չենք ցանկանում սահամանափակել նրանց մասնակցությունը SIA-ին:
- **Ինչպե՞ս են գաղափարները գնահատվելու Քովիդ-19-ի ժամանակներում:** Գնահատման երեք չափորոշիչները (ներկայացված են վերևում) և դրանցից բխող հարցերը պետք է բավարար չափով կողմնորոշիչ լինեն գաղափարների գնահատման համար: Իհարկե, հետհամավարակային շրջանում բիզնեսի և հասարակության կանխատեսելի իրականությունը (անկախ այս համավարակից բխած ներկայիս իրավիճակից) հաշվի կառնվի սոցիալական ազդեցության ներուժը, նորարարության աստիճանը և իրագործելիությունը/գաղափարի իրականացման հավանականությունը գնահատելիս: Բայց դա, ամենայն հավանականությամբ կարվի երկարաժամկետ հեռանկարով՝ չկենտրոնանալով Քովիդ-19-ի առաջացրած անմիջական սահամանափակումների վրա:

## Եզրափակիչ անցած մասնակիցների ընտրությունը

Անաչառության և արդարության բարձր մակարդակ ապահովելու համար եզրափակիչ անցած մասնակիցների ընտրությունը տեղի կունենա բազմափուլային եղանակով.

## Մասնակցության իրավունքի ստուգում

Նախքան ներկայացված հայտերի որևէ ձևով գնահատումը, SIA-ի թիմը ստուգում է՝ արդյոք դիմորդները բավարարում են մասնակցության բոլոր պայմաններին: Բոլոր այն դիմորդները, որոնք լիովին չեն համապատասխանի այդ պայմաններին, կտեղեկացվեն այդ մասին, մինչդեռ նրանք, ովքեր բավարարում են, կտեղափոխվեն հաջորդ փուլ:

## Սքրինինգ

Գնահատման առաջին փայլով սոցիալական նորարարությունների ընտրյալ մասնագետներից կազմված սքրինինգի թիմը կգնահատի բոլոր հայտադիմումները՝ հիմնվելով գնահատման չափանիշների վրա (տես՝ [Գնահատման չափանիշները](#)), ինչի արդյունքում կստեղծվի հաջորդ փուլ անցած մասնակիցների ցանկ:

Սքրինինգ թիմի որոշումներն իրականացվում են դռնփակ և բողոքարկման ենթակա չեն:

2022 թվականին սքրինինգ թիմի անդամներն են.

- **Տաթև Մանթոյան**, Իմփաքթ Յաք Երևան
- **Նաիրի Մելքոմ Մելքոմյան**, Social Impact Award 2022
- **Անաշե Յախվերդյան**, Իմփաքթ Յաք Երևան
- **Թալին ճղյան**, «Զբոսաշրջության աջակցման կենտրոն» հիմնադրամ



Նշում. Այս ցանկը կարող է փոփոխվել: Հիվանդության կամ այլ չնախատեսված իրադարձության դեպքում փոփոխությունները կարող են չարտացոլվել:

## Հարցազրույցներ

Հաջորդ փուլ անցած մասնակիցները կիրավիրվեն կարճ հեռախոսային հարցազրույցի հուլիսի 14-ից հուլիսի 18-ն ընկած ժամանակահատվածում: Հարցազրույցների նպատակը դիմորդներին ավելի լավ ճանաչելն է և համոզվելը, որ նրանք ծանոթ են մասնակցության բոլոր պայմաններին:

## Ժյուրիի գնահատումը եզրափակիչ անցած մասնակիցների փուլում

Հարցազրույցներից հետո SIA-ի ժյուրին կգնահատի նրանց՝ հիմնվելով գնահատման չափանիշների վրա: Առավելագույն գնահատականներ ստացած 10 գաղափարները կտեղփոխվեն Social Impact Award 2022-ի եզրափակիչ փուլ՝ մուտք ունենալով SIA-ի ինկուբացիային:

Ժյուրիի որոշումներն իրականացվում են դռնփակ և չեն հրապարակվում: Եզրափակիչ անցած մասնակիցների անունները կհրապարակվեն 2022 թվականի հուլիսի 29-ին:

Social Impact Award 2022-ի հայաստանյան ժյուրին կազմված է սոցիալական նորարարության մեծ ու բազմակողմանի փորձ ունեցող հետևյալ բարձրակարգ փորձագետներից.

- **Գևորգ Պողոսյան**, Իմփաքթ Հաբ Երևան
- **Սիլվա Մեսրոպյան**
- **Արման Խաչատրյան**, Քոդեքս
- **Մարգարիտա Նուրիջանյան**
- **Արեգ Թադևոսյան**
- **Դիանա Զոբանյան**
- **Սուրեն Մխիթարյան**

Նշում. Այս ցանկը կարող է փոփոխվել: Հիվանդության կամ այլ չնախատեսված իրադարձության դեպքում փոփոխությունները կարող են չարտացոլվել:

## Հաղթողների ընտրություն

Ինկուբացիոն փուլի ավարտից հետո Social Impact Award-ի շրջանակում երկու մրցանակ է նախատեսված՝ Ժյուրիի մրցանակ և Համայնքի մրցանակ: Յուրաքանչյուրն ունի իր առանձին ընտրական գործընթացը:



## Ժյուրիի գնահատումը հաղթողների ընտրության փուլում

**Ժյուրիի մրցանակի հաղթողների** ընտրության գործընթացը հետևյալն է.

1. **Փիչինգ.** Եզրափակիչ անցած յուրաքանչյուր մասնակից հրավիրվում է ժյուրիի մոտ ներկայացնելու այն գաղափարը, որով փորձելու են լուծել ընտրված խնդիրը, պատմելու առաջարկվող լուծումների և ինկուբացիայի ընթացքում գրանցած առաջընթացի մասին:
2. **Ժյուրիի նիստ.** Բոլոր փիչերից հետո ժյուրին հավաքվում է փակ նիստի՝ ընտրելու SIA Jury Award 2022 հայաստանյան երեք հաղթողներին: Գնահատման չափորոշիչները նույնն են, ինչ եզրափակիչ փուլում. սոցիալական ազդեցության ներուժ, նորարարության աստիճան, իրագործելիություն և իրականացման հնարավորություններ: Փիչերը ժյուրիի անդամների համար ինֆորմացիայի լրացուցիչ աղբյուր են՝ գնահատման չափորոշիչներն ավելի հստակեցնելու համար: Ժյուրիի որոշումը բողոքարկման ենթակա չէ:
3. **Մրցանակաբաշխություն.** Ժյուրիի մրցանակի հաղթողները (և Համայնքի մրցանակի, [տես՝ Համայնքի քվեարկություն](#)) կհայտարարվեն Մրցանակաբաշխության արարողության ժամանակ, որը տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 1-ին, Իմփաքթ Յաբ Երևանում:

## Համայնքի քվեարկություն

Լրացուցիչ մեկ մրցանակ կտրվի Համայնքի առցանց քվեարկության արդյունքում: Եզրափակի անցած ձեռնարկությունները ներկայացնող տեսահոլովակները կներկայացվեն SIA-ի կայքում: Քվեարկության շրջանի ընթացքում լայն հանրությունը կկարողանա առցանց քվեարկել իրենց նախընտրած ձեռնարկության օգտին: Առավելագույն քվեներ ստացած ձեռնարկությունը կարժանանա Համայնքի մրցանակին:

**Հնարավոր չէ շահել միանգամից երկու Social Impact Award:** Եթե ձեռնարկությունը շահի ինչպես ժյուրիի, այնպես էլ համայնքի քվեարկության արդյունքում, նրանց կշնորհվի ժյուրիի մրցանակը: Այս դեպքում Համայնքի մրցանակը կշնորհվի լավագույն արդյունքներով հաջորդ մասնակցին:

Բացի այդ, խնդրում ենք հաշվի առնել, որ համայնքի քվեարկության մասնակիցները, ինչպես նաև նրանց աջակիցները քվեարկությանը մասնակցելիս և դրա շրջանակում հաղորդակցվելիս պարտավոր են ելնել քվեարկության էթիկայի կանոններից: Social Impact Award թիմն ունի բոլոր իրավասությունները որակագրկելու ձեռնարկությանը՝ քվեարկության գործընթացը անաչառության ծիրից շեղելու կասկածանքով:

## Մրցանակներ և հետագա աջակցություն

### Մրցանակներ

Կա երկու մրցանակ.

- **Ժյուրիի մրցանակ.** Ժյուրիի կողմից առավելագույն քվեներ ստացած երեք ձեռնարկություններ կարժանանան 1500 եվրո մրցանակի:





- **Չամայնքի մրցանակ.** Եզրափակիչ անցած մեկ ձեռնարկություն կարծանանա Չամայնքի մրցանակին՝ 1500 եվրո մրցանակային ֆոնդով: Որոշումը կհիմնվի Չամայնքի քվեարկության արդյունքների վրա:

Մրցանակներից բացի, եզրափակիչ անցած բոլոր մասնակիցներն ու հաղթողները հնարավորություն կստանան մասնակցելու SIA առցանց գազաթնաժողովին՝ ինկուբացված յուրաքանչյուր ձեռնարկության համար: SIA գազաթնաժողովը SIA երկրների 2022 թվականի եզրափակիչ անցած բոլոր մասնակիցների և հաղթողների հավաքն է, որը տեղի կունենա նոյեմբերի 15-19 Վիեննայում (Ավստրիա):

## Շրջանավարտների աջակցություն

Որպես SIA շրջանավարտ՝ դուք մուտք կունենաք դեպի աքսելերատորների, հովանավորների, մենթորների միջազգային ցանց և կմասնակցեք ձեր ու ձեր ձեռնարկության հետագա զարգացմանը նպաստող ծրագրերի: Դուք կապի մեջ կլինեք 20 երկրների շրջանավարտների հետ՝ փորձ և գիտելիքներ փոխանակելու, նոր ընկերներ ձեռք բերելու համար: Որպես SIA շրջանավարտ՝ դուք մուտք կունենաք ֆեյսբուքի Շրջանավարտների խումբ, կստանաք համայնքի ամսաթերթը, ինչպես նաև նոր գործիքներ ու հնարավորություններ անձնական ու մասնագիտական աճի համար:

## Հիմնական ամսաթվեր

Հայտադիմումների ընդունում. **հունիսի 17**

Social Impact workshop Երևան. **հունիսի 26**

Social Impact workshop Գորիս. **հուլիսի 2**

Գաղափարների գեներացման/բիզնես մոդելավորման առցանց դասընթաց. **հուլիսի 5**

Վեբինար «Ինչպես բարելավվել Ձեր SIA հայտադիմումը». **հուլիսի 7**

Եզրափակիչ անցած մասնակիցների ընտրություն. **հուլիսի 19-23**

Եզրափակիչ անցած մասնակիցների անունների հայտարարում. **հուլիսի 29**

Ինկուբացիոն փուլ. **օգոստոսի 1-սեպտեմբերի 30**

Ձեռնարկությունների մասին տեսանյութերի ներկայացում. **օգոստոսի 29**

Չամայնքի քվեարկություն. **սեպտեմբերի 13-30**

Դեմո օր/Մրցանակաբաշխություն. **հոկտեմբերի 1**

SIA գլոբալ գազաթնաժողով. **նոյեմբերի 15-19**